ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Գ. Ս. ՔԻԼԻՄՋՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երիտթուրքերի քաղաքականության հետևանքով, ազգային հարցը Օսմանյան կայսրությունում հատկապես սուր բնույթ էր ստացել։ Մասնավորապես սրվել էր հունական հարցը։ 1908 թ. վերջերից Օսմանյան կայսրության բռնապետության տակ բնակվող հույների դեմ երիտթուրքերի սկսած կատաղի հալածանքներն էին, որն ի վերջո հանգեցրեց նրանց զանգվածային արտաքսմանը։

Տրիպոլիտանիայի ու Կրետեի, ինչպես նաև Էգեյան ծովի կղզիների ու Եվրոպական Թուրքիայի մեծ մասի կորստից հետո անվստահությունը և նույնիսկ վախը՝ դեպի Թուրքիայում բնակվող ոչ թուրք ժողովուրդները և, մասնավորապես, հունական բնակչությունը, դարձավ երիտթուրքերի քաղաքականության ելակետն ազգային հարցում։ Հունական տարրը սկսեց դիտվել որպես Փոքր Ասիայի ամբողջականությանը սպառնացող վտանգ։ Անվստահության մյուս շարժառիթը տնտեսության և, մասնավորապես, առևտրի ասպարեզում Օսմանյան կայսրության մեջ հույների ունեցած նշանակալի տեսակարար կշիռն էր։ Նրանց ձեռքում էր կենտրոնացված կենսամթերքի, մանուֆակտուրայի, ինչպես նաև մանր առևտրի զգալի մասը։ Բացի այդ, նրանց դերը մեծ էր առափնյա առևտրի ասպարեզում։ Այդ առթիվ թուրք ժամանակակից պատմաբան Յ. Հ. Բայուրը նշում է. «Երկրի տնտեսական բնագավառում գրեթե լիովին գերիշխում էին ոչ թուրք տարրերը, հիմնականում՝ հույները»[1]։ Այդ հանգամանքը առաջ էր բերում թուրք առևտրական բուրժուազիայի զայրույթն ու դժգոհությունը, որը ձգտում էր ասպարեզից դուրս մղել տնտեսական ամուր դիրքեր ստացած հպատակ ժողովուրդների բուրժուազիային։ «Սկսած Բալկանյան պատերազմից,— արձանագրում է «Թասվիր-ը էֆքյար» թերթը,— թուրքերը ինքնագիտակցության միանգամայն բնական զարթոնք ապրեցին և զգացին տնտեսական առումով ևս ուժեղանալու անհրաժեշտությունը»[2]։

Հարցն ավելի էր սրվում նրանով, որ տնտեսապես հզորացած ոչ թուրք բուրժուազիան, առաջադրում էր նաև իր քաղաքական պահանջները. նա հանդես էր գալիս երկրի վարչական ապակենտրոնացման, ինքնավարության պահանջով, որն արդեն բացահայտ դիմադրության էր հանդիպում թուրքական կառավարության և թուրք վերնախավերի կողմից։

Հանրահայտ է, որ այլազգի (հատկապես հույն) բուրժուազիան առավելապես ամուր դիրքեր էր գրավել Եվրոպական Թուրքիայում և Փոքր Ասիայի արևմտյան ծովափին։ Երկրի այս կարևոր շրջանները այլազգիների ազդեցությունից դուրս բերելու նպատակով երիտթուրքերը դիմեցին դրանք հույներից մաքրելու քաղաքականությանը։

Հակահունական կամպանիայի ծավալման առիթ հանդիսացավ հունական

---

[1] Y. H. Bayur, Türk inkılâbı tarihi, cild 2, kısım 3, Ankara, 1951, s. 253.

[2] *Վերցված է* „С.-Петербургские ведомости" *թերթից*, 7(20). III. 1914.

Մակեդոնիայից ու Թրակիայից ծայր առած թուրքերի զանգվածային արտագաղթը, որն սկսվել էր դեռևս բալկանյան առաջին պատերազմի օրերին։ Երիտթուրքերը սկսեցին գաղթական թուրքերին տեղավորել հույներով խիտ բնակեցված վայրերում, այսինքն, Թուրքիայի եվրոպական մասում և էգեյան ծովափին, նպատակ ունենալով ստեղծել թուրք բնակչության գերակշռություն։

Այս միտումը, ըստ Բայուրի, բխում էր հիշյալ շրջաններում հնարավոր թվացող խռովություններն ու արտաքին միջամտությունը վերացնելու կառավարության մտահոգությունից[3]։

1913 թ. հոկտեմբերից սկսվեց նաև Թրակիայի հունական բնակչության հարկադրյալ արտագաղթը դեպի Հունաստան։ Տեղական իշխանությունները, ինչպես վկայում է հայտնի պետական գործիչ Խալիլ Մենթեշեն իր հուշերում, հրահանգ էին ստացել գործադրել բոլոր միջոցները, որպեսզի ստիպեն հույներին արտագաղթել[4]։ Հույներին հարկադրական արտագաղթի մղելու համար օգտագործվեցին հալածանքի ու բռնության բարբարոսական բազմազան ձևեր ու միջոցներ։ Հալածանքներն սկսեցին ընդունել շարդի բնույթ։ Թրակիայի թուրքական մասում մի շարք հունական գյուղերի բնակչությունը ամբողջությամբ բնաջնջվեց։ Պաշտպանելով երիտթուրքերի այս քաղաքականությունը, նրանց կիսապաշտոնական օրգան «Ժեոն թուրք» թերթը գրեց. «Թրակիայից օսմանյան հույների արտաքսումը ղուտ թուրքական ներքին գործ է...»[5]։

Հույների նկատմամբ հալածանքներն ու բռնությունները միայն Թրակիայի շրջաններով չսահմանափակվեցին և լայն ծավալ ընդունեցին նաև Փոքր Ասիայի արևմտյան ծովափին։ Թուրքական զինված խմբերը, հարձակվելով հունական բնակավայրերի ու գյուղերի վրա, շարդում ու արտաքսում էին բնակիչներին և տիրանում նրանց բնակատեղիներին և ունեցվածքին։ Կ. Պոլսի ռուսական դեսպանության թարգման Տուխոլկան հաղորդում է այն սարսափելի կոտորածի մասին, որ կատարվել է հին և նոր Ֆոկիայում, ուր «կոտորվել է գրեթե ողջ բնակչությունը»[6]։ Մեկ ուրիշ ականատես, ֆրանսիացի հնագետ Ֆելիքս Սարթիոն, գրում է, որ հունական գյուղերի վրա հարձակվող թուրք հրոսակախմբերը տեղական իշխանությունների կողմից զինվում էին Մարտինի սիստեմի հրացաններով և մուշկետներով[7]։

Իրենց բնօրրանից արտաքսված, թալանված, լլկված ու սովահար հույների բազմահազարանոց խմբերը խռնվեցին առափնյա քաղաքներում՝ սպասելով Հունաստանից ժամանող նավերին։ «Հույների վիճակը արգահատելի է։ Սովահար և ամեն բանից զրկված ու կողոպտված, անոնք բացօթյա կրնակին առանց ապաստան մը ունենալու։ Իրենց գույքերը հափշտակված են ու կիները անպատված։ Հույների բնակարանները կնքված են իշխանության կողմից, որ տանտերերը կվտարեն»[8]։

Գնալով ավելի էին ընդլայնվում հույների հալածանքն ու արտաքսումները։ «Թուրքիայի զանազան վիլայեթներում,— գրում է թերթերից մեկը,— հակա-

---

3 Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 251։

4 Տե՛ս նույն տեղում։

5 Վերցված է „С.-Петербургские ведомости" թերթից, 20. IV(3.V), 1914:

6 Центральный государственный архив военно-морского флота, ф. 418, оп. I, д. 4261, л. 201.

7 Տե՛ս „Revue des deux Mondes", t. 24, Paris, 1914, p. 663.

8 «Ազատամարտ», 25, V (7.VI). 1914։

հունական շարժումը ոչ միայն չի նվազում, այլ, ընդհակառակը, ընդունում է առավել մեծ չափեր և առավել դաժան բնույթ»[9]։ Դրան նպաստում էին պետական մարմինները, որոնք կազմակերպված բնույթ էին տալիս անօրենությանը։ «Թրակիայի տարբեր վայրերից տրվող հաղորդումների համաձայն,— կարդում ենք ռուսական կառավարական թերթում,— ակնհայտ է դառնում, որ թուրքական իշխանությունները ամենաբազմազան հարկադրանքներով ստիպում են հույներին լքել իրենց բնակավայրերը»[10]։ Իսկ ֆրանսիական ազդեցիկ «Թան» թերթը, հանգամանորեն վերլուծելով արտագաղթի պատճառները, բացահայտում էր թուրքական կառավարության հետապնդած նպատակը. «Թուրքական կառավարությունը որոշել է բացարձակապես մահմեդականներով բնակեցնել Բալկանյան թերակղզու այն մարզերը, որոնք դեռևս մնացել են Օսմանյան կայսրության կազմում, կամ, ավելի ճիշտ, նա որոշել է մահմեդական նոր տարրերով զորեղացնել Թրակիայում արդեն առկա թուրքական բնակչությունը...[11]։ «Թուրքական իշխանությունների կողմից հույների զանգվածային արտաքսումը կատարվում է Գերմանիայի հրահրումով,— գրում էր «Նովոյե վրեմյա» թերթը։— Ի դեմս հույների, նա տեսնում է Թուրքիայի տնտեսական շահագործման մրցակիցներին, նրանց համարելով Ասիական Թուրքիայի գաղութացման ու գերմանականացման որոշակի խոչընդոտ»[12]։

Հակահունական կամպանիա բորբոքելով, երիտթուրքերը ցանկանում էին նաև ճնշում գործադրել հունական կառավարության վրա՝ հարկադրելով նրան զիջումներ անել Էգեյան կղզիների հարցում։ Այդ կապակցությամբ, դեռևս 1914 թ. հունվարին, Աթենքի թուրքական դեսպանը սպառնաց, որ կղզիների հարցում Հունաստանի դրսևորած համառությունը կարող է տխուր հետևանքներ ունենալ ինչպես Հունաստանի, այնպես էլ Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող ողջ հույն բնակչության համար[13]։ Բռնի արտագաղթին զուգահեռ, երիտթուրքերը նորից ծավալեցին հակահունական տնտեսական բոյկոտի քաղաքականություն։

1913 թ. վերջերին հակահունական բոյկոտը փոքրասիական մի քանի նավահանգիստներում, հատկապես Զմյուռնիայում, հասավ մեծ չափերի։ «Թասվիր-ը էֆքյարի» կարծիքով «Թուրքերի և մահմեդականների բոյկոտը միանգամայն օրինական է. նրանք այդ ձևով ցանկանում են տնտեսական ասպարեզում ևս դրսևորել իրենց եռանդն ու ձեռներեցությունը»[14]։ Զարդացնելով այդ միտքը, Բայուրը գրում է. «Օսմանյան կայսրության հույների հետ առևտրական հարաբերությունները խզելու մասին կառավարության ու «Միություն և Առաջադիմություն» կուսակցության գաղտնի որոշումը մի կողմից նպաստելու էր նրանց տնտեսական ազդեցության խարխլմանը, իսկ մյուս կողմից՝ դյուրացնելու էր տնտեսական ասպարեզում թուրքերի խիստ թույլ դիրքերի ամրապնդումը»[15]։ Թուրքական առևտրական բուրժուազիայի գործունեությունը առա-

9 «С.-Петербургские ведомости», 8 (21). VI. 1914.
10 «Правительственный вестник», 12 (25). IV. 1934.
11 «С.-Петербургские ведомости», 3 (16). VI. 1914.
12 «Новое время», 17 (30). VI. 1914.
13 Galib Kemali Söylemezoglu, Hatıralar. Atina Sefareti (1913—1916), Istanbul, 1946, s. 144.
14 «С.-Петербургские ведомости», 7 (20). III. 1914.
15 Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 253։

վել արդյունավետ դարձնելու համար երիտթուրքերը սկսեցին դրամական միջոցներ կուտակել՝ առևտրական մի մեծ ընկերություն հիմնելու նպատակով։ Սակայն բոյկոտի քաղաքականության միջոցով թուրքական բուրժուազիայի տնտեսական դիրքերը բարելավելու և ամրապնդելու ջանքերը կրկին ձախողվեցին։ Այդ առթիվ Բայուրը նշում է. «Տնտեսական բնագավառում թուրքերի տեսակարար կշիռը մեծացնելու փոխարեն բոյկոտը ավելի շուտ ծառայեց որպես զոռբաների հարստացման ժամանակավոր միջոց»[16]։

Հակահունական կամպանիան ողբերգական եղավ հույն ժողովրդի համար։ 1914 թ. հունիսին կազմված միջազգային հանձնաժողովը Օսմանյան կայսրության ներքին գործերի մինիստր Թալաաթի ուղեկցությամբ Էգեյան ծովափին կատարած շրջագայության ժամանակ արձանագրեց, որ հակահունական կամպանիայի ընթացքում թուրքական հրոսակախմբերի ասպատակությունների հետևանքով այդ շրջանների մեծ մասը վերածվել է անապատի։ Հրդեհված ու կործանված էին հունական գյուղերն ու բնակավայրերը, ավերված էին դաշտերը, այգիներն ու ցանքատարածությունները։ Այդ հանձնաժողովի անդամ, ռուսական ներկայացուցիչ Տուխոլկան հաղորդում է, որ ամբողջ Էգեյան ծովափից հույների վտարման պլանը նախօրոք և կատարելապես մշակված էր կենտրոնական կառավարության կողմից[17]։

Հակահունական կամպանիան շարունակվեց հիշյալ շրջագայությունից հետո։ Հուլիսի 1-ի հաղորդման մեջ Կ. Պոլսի ռուսական զինվորական ներկայացուցիչ Սերգեևը նշում է, որ երիտթուրքերի կոմիտեն, Թալաաթի և Ջավիդի մասնակցությամբ, որոշել է «կարգադրել իշխանություններին բոլոր միջոցներով նպաստել արտագաղթին»[18]։

Արտաքսման վայրերը կատարած Թալաաթի քննական շրջագայությունը կրում էր սոսկ ձևական բնույթ և հունական ու եվրոպական հասարակական կարծիքը հանգստացնելու լոկ անհաջող մի փորձ էր։ Հրապարակորեն «դատապարտելով» հակահունական հալածանքները, Թալաաթը գաղտնորեն հրահանգում էր ամենայն հետևողականությամբ կիրառել հույների հանդեպ իրականացվող պետական քաղաքականությունը։ Այսպես. Բուրսայում նման բնույթի հրապարակային մի ելույթից հետո, նա իր մոտ է կանչում թուրքական իշխանությունների ներկայացուցիչներին և ցուցում տալիս. «Ոչ մի ուշադրություն չդարձնեք ժողովրդին ուղղված իմ խոսքերին։ Մեր պարտքն է մինչև վերջը իրագործել մեր նշած ծրագիրը և շարունակել մեր երկրից քրիստոնյաների վտարումը»[19]։ Իհարկե, պետական քաղաքականության բնույթ կրող նման հրահանգների հետևանքով հույների հալածանքները շարունակում էին մոլեգնել։ Հրի ու սրի արյունահեղ քաղաքականության հետևանքով, Թրակիայից ու Էգեյան ծովափից անվերադարձ տեղահանվեց մոտավորապես 200 հազար հույն[20]։ Այդ շրջանից հղված դիվանագիտական հաղորդումները վկայում են, որ զանգվածային արտաքսումից հետո, ամբողջ Էգեյան ծովափը, մասնավո-

16 Նույն տեղում։
17 ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. 4261, л. 201.
18 Նույն տեղում, թ. 199։
19 «С-Петербургские ведомости», 2 (15). VII. 1914.
20 „Documents diplomatiques Français", t. X, Paris. 1936, p. 600.

բացակա՝ Զմյուռնիայի նահանգը և Դարդանելի երկու ափերը, լիովին մաքրվեցին հունական տարրից[21]։

Հակահունական կամպանիան իրականացնելու հետ մեկտեղ, թուրքական կառավարությունը ջանում էր իրենից հեռացնել այդ գործի պատասխանատվությունը։ Դեռևս 1914 թ. ապրիլին, «քննելով» թուրքական Թրակիայից հեռացող հույների արտագաղթի պատճառները, Թալաաթը հայտարարեց, որ հույների արտագաղթը հիմնականում հունական նոր տերիտորիաները փախած 12 հազար հույն փախստականների դրդումների արդյունքն է, որոնք կոչ են անում իրենց ազգակիցներին գաղթել և տեր դառնալ տեղի մահմեդականների ունեցվածքին[22]։ Բացի այդ, նա պնդում էր, թե բալկանյան պատերազմի ընթացքում մահմեդական բնակչության հանդեպ կատարած վայրագությունների փոխվրեժից խուսափելու համար հույները ձգտում են հեռանալ թուրքական հողերից[23]։ Այս տեսակետը նա արտահայտեց նաև նույն տարվա հունիսին, էգեյան ծովափում կատարած իր «քննական» շրջագայությունից հետո[24]։

Աթենքի Օսմանյան կայսրության դեսպան Գալիբ բեյը իր հուշերում փորձում է ժխտել հույների դեմ ծավալված կամպանիայի պետական բնույթը[25]։ Նույն տեսակետն է արտահայտում նաև Բայուրը։ Նա նշում է, որ Օսմանյան կայսրությունում հույների հալածանքները Հունաստանում ծավալված հակաթուրքական գործողությունների արձագանքն են[26]։ Հույների հալածանքների կապակցությամբ հունական կառավարությանը 1914 թ. հունիսի 17-ին հղված նոտայում թուրքական կառավարությունը ևս պնդում էր, թե Փոքր Ասիայում ծավալվող իրադարձությունները ժողովրդի որոշ շրջաններում առաջացած վրդովմունքի հետևանքն են[27]։ Այսուհանդերձ, Բայուրը նշում է, որ վերջին հաշվով, դրանք տեղի ունեցան կառավարող շրջանների թողտվությամբ[28]։ Հատկանշական է, որ Խալիլ Մենթեշեն միանգամայն որոշակի վկայում է, որ հույների արտագաղթը պետականորեն կազմակերպված միջոցառում էր[29]։

«Քննական» շրջագայությունից վերադարձած Թալաաթը իր զեկուցագրում այդ վայրագություններին անդրադառնում էր հարևանցիորեն, դրանք ներկայացնելով որպես մասնավոր և ոչ էական երևույթներ։ Նրա զեկուցագրում նշվում էր, որ «ծրբեմն եղել են նաև հափշտակություններ, ընդհարումներ ու

---

21 ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. 4261, л. 201 и МОЭИ, серия III, т. IV (1914—1917), М.—Л., 1931, стр. 84, 183. Տեղին է նշել, որ հույներին իրենց հայրենի բնօրրանից արմատախիլ անելու արյունոտ քաղաքականությունը չսահմանափակվեց սոսկ երիտթուրքերի տիրապետությամբ։ Այն շարունակվեց և անհամեմատ մեծ չափեր ընդունեց քեմալական շարժման ընթացքում, երբ հիմնովին ու վերջնականապես Փոքր Ասիան մաքրվեց հույներից։ Հետագայում ևս, թուրքական կառավարությունները առիթը բաց չէին թողնում Կ. Պոլսում և Զմյուռնիայում խմբված հույներին կոտորելու, նրանց ունեցվածքը հափշտակելու և երկրից վտարելու համար։ Հանրահայտ է, որ Մենդերեսի կառավարության հրահրած հակահունական կամպանիայի հետևանքով, 1955 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, Ստամբուլում և Զմյուռնիայում տեղի ունեցան հունական չարդեր, որոնց հետևանքով սպանվեցին բազմաթիվ հույներ և հայեր։

22 G. Kemali, Hatıralar. s. 101.

23 Նույն տեղում։

24 Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 254—255։

25 G. Kemali, Hatıralar, s. 118.

26 Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 253։

27 G. Kemali, Hatıralar, s. 122.

28 Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 251։

29 Նույն տեղում։

սպանություններ»[30]։ Աթենքի թուրքական դեսպանը, ավելի մեղմացնելով Թալաաթի վերոհիշյալ ժլատ խոստովանությունը, դրեթե ժխտում է այդ իրադարձությունները, դրանք ներկայացնելով որպես որոշ «տհաճ երևույթներ»[31]։

Թուրքական գրականության մեջ խիստ կերպով նվազեցված է նաև Օսմանյան կայսրությունից հարկադրաբար արտագաղթած կամ բռնությամբ վտարված հույների թիվը։ Դեռևս այն ժամանակի թուրքական աղբյուրները պնդում էին, թե իբր Օսմանյան կայսրությունից գաղթել են միայն 1000 հույներ, ըստ որում իրենց սեփական ցանկությամբ և թուրքական վարչության կամքին հակառակ[34]։ Այնինչ, Թալաաթի զեկուցագրում նշված է, որ «Գաղթը, գրեթե բոլոր վայրերում, կատարված է զանգվածորեն»[35]։

Այսպիսով, թուրքական գրականության մեջ ամեն կերպ խեղաթյուրվում է երիտթուրքերի ազգային քաղաքականության էությունը և դրանով պաշտպանության տակ է առնվում Անատոլիան ոչ թուրք ժողովուրդներից, հիմնականում՝ հույներից ու հայերից մաքրելու նրանց ռեակցիոն-շովինիստական քաղաքականությունը։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին թուրքական Թրակիայում և էգեյան ծովափին զանգվածորեն բնակվող հույների դեմ ծավալված արտաքսման կամպանիան ու տնտեսական բոյկոտը երիտթուրքերի ազգային քաղաքականության ծրագրի բաղկացուցիչ մասն էր։

К ВОПРОСУ О НАЦИОНАЛЬНОЙ ПОЛИТИКЕ МЛАДОТУРОК

Г. С. КИЛИМДЖЯН

Резюме

В статье анализируется реакционно-шовинистическая политика младотурок в отношении греков, проживавших в пределах Османской империи. Политикой экономического бойкота, которая сопровождалась массовыми гонениями и резней, младотурецкое правительство стремилось «очистить» Малую Азию от нетурецких элементов, укрепить экономические позиции турецкой буржуазии, а также заставить Грецию пойти на уступки в вопросе об Эгейских островах.

В результате этой политики 200 тыс. греков были вынуждены покинуть свои исконные земли и переселиться в Грецию.

Антигреческая кампания во многом обострила отношения между Османской империей и Грецией и стала одной из причин напряженных отношений между этими двумя государствами накануне первой мировой войны.

---

30 Նույն տեղում, էջ 255։
31 G. Kemali, Hatıralar, s. 105.
32 Y. H. Bayur, Նշվ. աշխ., էջ 251։
33 Նույն տեղում, էջ 253։
34 «Правительственный вестник», 31. V (13. VI). 1914.
35 Y. H. Bayur, Նշվ. աշխ., էջ 255։